

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԻՍՐԱՆԻՅ ԴՊՐԵՎԱՆՈՒՅ ԱՐՄԱՇՈՒ

ՏԱՐԻ 45

ԹԻՒ 10

ՅՈԳՈՍՏՈՍ 1896

ԳՐԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԲՄԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարեկան	40	Ղուրուշ
Վեցամսեայ	20	»
Թղթաւորութեան քախք տարեկան	10	»

Հատուկ ՄԵԿ Ղուրուշ

Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ԱՐՆԻՍԷԲ Լրագրոյ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԴԱՀԱՆԱՅԻՅ ԱՊՐՈՒՍՏԸ	Մ. Ե. Օ.
ԵՐԿՆԱՌՐ ՀԱՅԸ	ԽՈՍՐՈՎ Վ.
ԴՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ	ՋԱԷՆ Վ.
ՆԱԽՆԵՍԵ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԱՊԱՇԵՍ.	
ԲՈՒԹԻՒՆԸ	ՄԱՇԹՈՑ Վ.
ՏՈՄՍԻ ԿԱՐԳԱԳՐՈՂԸ	ԱՂԱՆ Վ.
ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ	ՄՈՒՇԵՂ Վ.
ԱԶԳԱՅԻՆ ԷՒ ԴԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ	

Բաժանորդագրութեանց, ծանուցմանց եւ այլ մանրա-
մասնութեանց համար դիմել առ

Տնօրէնութիւն ԱՐԵՒԵՆՔ Լրագրոյ
Ղալաթիա, Նորասուկէան — Խան

Նիկովիդիոյ գործակալն է Մինաս Էֆէնտի Աշեան,
որ միանգամայն Դպրեվանդաց գործակալն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՔ

Թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ՛ գաւառաց համար բաժա-
նորդագինք կանխիկ կը վճարուին:

Բաժանորդագրութիւնք կ'սկսին իւրաքանչիւր ամսոյ
1 ին կամ 15 ին:

ՄԱՍԻՍ

ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԽԵ. ՏԱՐԻ

3 ՕԴՈՍՏՈՍ 1896

ԹԻՒ 10

ՔԱՀԱՆԱՅԻՑ ԱՊՐՈՒՍՏԸ

Ներքին բարեկարգութեան արդեւքներէն մեծագոյնը կը կազմէ այդ կէտը: Ստոյգ է թէ պէտք չէ հոգեւորը մարմնաւորին հպատակեցնել, ստոյգ է նաեւ որ մարմնաւորը չարդարացներ հոգեւորին թերութիւնը, բայց մարմնաւորին և հոգեւորին սերտ կապակցութիւնը իրաւունք կուտայ քահանայից, որ երբ հոգեւորը կուտան ժողովրդեան, մարմնաւորը ընդունելու սպասեն: Եկեղեցին իւր հին կանոններով նուիրագործած է այդ իրաւունքը և յատուկ ձեւեր ալ սահմանած է, որպէս զի թէ՛ կանոնաւոր և թէ՛ ապահով լինի քահանայից ապրուստը, և ով որ սեղանին կը ծառայէ, սեղանէն առնու իւր կեանքին պէտքերը:

Այժմեան սովորութիւնն իւրաքանչիւր քահանայի յատուկ ծուխեր կը սահմանէ, և ծխատէրը կը վայելէ

նոյն տունին բոլոր հասոյթները, մանաւանդ պսակներու և թաղումներու առիթներուն, որք արդիւնքի գլխաւոր աղբիւր են, իսկ երկրորդականներն են մկրտութիւն, տնօրհնէք, ժամուց և յիշելիք։ Այս անհատական հասոյթներու քով, շատ նուազ է քահանայից ընդհանուր կամ հասարակ կոչուած հասոյթը որ կը գոյանայ եկեղեցւոյ գանձանակներէն և պնակներէն։ Հետեւաբար կ'իմացուի թէ ինչո՞ւ քահանայք աւելի կը մշակեն անհատական կամ ծխական հասոյթներու աղբիւրը։

Ծուխերու բաշխումը այժմ՝ կամաւոր բան մը դարձած է, մանաւանդ քաղաքներու մէջ։ Ուշողը ուղած քահանայն կ'ընտրէ, և ոչ ալ Պատրիարքարանէ կամ Առաջնորդարանէ հաստատութեան կ'սպասէ։ — Խղճի և վստահութեան խնդիր է, կ'ըսուի, և իւրաքանչիւր սքիւր վստահելի քահանայն պէտք է ընտրէ։— Բայց միւս կողմանէ անուրանալի է, որ քահանայից առիթ կը արուի, ամեն միջոց գործածելու որ լաւագոյն ծուխեր խլեն, և երբ ճարպիկներ կը յաջողին, մնացեալներ կը զրկուին։

Ասկէ կը ծագի քահանայից մեծամասնութեան մէջ տիրող փախաբը որ ծուխեր թուաբանական հաշուով մը բաշխուին առաջնորդներու ձեռօք, ինչպէս մեզմէ առաջ կը կատարուէր, և ծխագիրներու ձեւերն իսկ հրատարակութեան արուեստն։ Առաջնորդք այն ատեն ծուխերը կոնդակով կը բաշխէին, բայց ոչ ձրի . քահանայք որոշ դումարներ կը վճարէին առաջնորդին, և զինը աւելցնելով ծուխեր կ'ստանային, և զինը վճարած և սեփականութիւն մը դնած մարդու ձեւով կը մանէին քահանայք ծխատիրութեան իրաւունքին . Այդ ձեւին մէջ տեղի ունեցած ղեղձումներն էին, որք ծխագիրներու կամ ծխական կոնդակներու խափանման առիթ ընծայեցին։

Ծխական իրաւունքը խափանելով, ռոճկի դրութիւնը մութանելու առաջարկներ եղած են զանազան կողմերէ։ Իրաւ որ ռոճկի ձեւը ընդհանրացած է պաշտօնէու-

Թեանց համար, և պաշտօնէից համար ալ դիւրին և ապահով դրութիւն մըն է, սակայն ոչ նուազ սոցիզ է, որ ռոճկի դրութեամբ կը խզուի ծովսին և ծխատէրին, ժողովուրդին և քահանայէն ներքին կապը, և քահանայք հետզհետէ սրտով և շահով անկախ դասակարգ մը կը կազմեն, և մեր մէջ ալ կը մտնէ արեւմտեայց կղերական Թիւն (clericalisme) անունով ճանչցած զգացումը, որ Աստուծով Հայ եկեղեցականութեան մէջ չկայ, և պէտք է ջանալ որ երբէք չմտնէ:

Տարբեր դրութեանց շարքին մէջ, վերջը Թողուցինք, այն որ կարգաւ առաջինն է, այսինքն է նախկին եկեղեցւոյ դրութիւնը: Ըստ եկեղեցական կանոնաց, ծովսեր քահանայից չեն պատկանիր, այլ եկեղեցւոյ: «Այս անուն քահանայի ծովս» բացատրութիւնը ընդունուած չէ, այլ իւրաքանչիւր ոք այս ինչ եկեղեցւոյ ծովս է: Իւրաքանչիւր եկեղեցի իւր ծովսերու համեմատ քահանայներ պիտի ունենայ, և ամեն ծխական տուն տասնորդի կամ պտղիի ձեւով հասոյթ պիտի վճարէ եկեղեցւոյ, հասոյթները պիտի գումարուին աւագերէցի գլխաւորութեամբ և քահանայներու ձեռքով. և հաւաքուածը պիտի բաշխուի համեմատաբար նոյն եկեղեցւոյն ծառայող գլխաւոր քահանայներուն, սորկաւագներուն, դպիրներուն և այրիներուն: Զ. դարուն, Ներսէս Բագրեւանդացի Կաթողիկոսին ժամանակ գումարուած Դընայ ժողովոյն ժԳ կանոնը կը հրամայէ յայտնապէս: «Ժողովրդականք չըլլայ թէ հրապուրուին եկեղեցականներէն եկեղեցւոյ ծովսերը բաժնելու. որ խռովութեան պատճառ չտրուի, այլ բոլոր հասոյթները և պտղիները յօժարութեամբ աւրբ եկեղեցին բերեն, և տուն տուն ու դաս դաս բաժիններ չկազմեն որ վնասակար է: Սուրբ եկեղեցւոյ մէջ հաւաքուածն ալ քահանայներ կանոնաւորաբար բաշխեն, գլխաւոր քահանայներուն երկուքուկէս բաժին, մնացեալ քահանայներուն երկու բաժին, սորկաւագներուն մէկուկէս բաժին, դպիր-

ներուն մէկ բաժին, նոյնչափ և եկեղեցւոյ ծառայող պարկեշտ այրիններուն: Ով որ այդ կարգադրութեան հակառակի, իւր կարգէն և իւր իրաւունքէն զրկուի»: և

Այդ կանոնին լրումը կը կազմէ Մխիթար Գոշի յառաջ բերած արամադրութիւնը, որ «եթէ ժողովրդական մը թաղէ թաղ փոխադրուի, այն թաղին ծուխ համարուի, ուր կը բնակի և ո՛չ առաջինին» (Տաճ. Ա. Գլ. Դ.):

Այս դրութեան դեղեցկութիւնը յայտնի է, և օգուտներն ալ անուրանալի, միայն թէ դժուարին կը կարծուի ժամանակ անցնելէ յետոյ, հին կանոն մը իւր ամեն մասերով վերանորոգել:

Մ. Ս. Օ.

Ե Ր Կ Ն Ա Ի Ո Ր Հ Ա Յ Ը



ՀԱՇՈՒ ԱԻԵՏԱՐԱՆ (ՅՈՎ. Հ. Զ. 39—47)

«Այս են կամք շօր իմոյ որ առաքեացն զիս. զի զամենայն զոր ետ ցիս հայր՝ ոչ կորուսից ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յեսնում»:

Գալիլիոյ կամ Տիբերեայ ծովակին անդիլի կողմը կատարուած հինգ հացերու հրաշալի բազմացումն՝ առաւել կամ նուազ մանրամասնութեամբ կ'նկարագրեն երեք խմբագիր աւետարաններն (Մատթէոս, Մարկոս և Դուկաս): Այդ նշանաւոր իրողութիւնն Յովհաննէս ալ իր աւետարանին մէջ կը պատմէ, միանգամայն յառաջ բերելով այդ առթիւ խօսուած այն իմաստալից քարոզը, որ ծանօթ է Կ ա թ ա ո ռ ա ու մ ի կամ Ե Ր Կ Ն Ա Ի Ո Ր Հ Ա Յ Ի Ն քարոզը՝ անուենով, և որուն մասը կ'կազմէ այս ճաշու աւետարանը:

Աւետարանիչն իւր նպատակին համեմատ, գլխաւորապէս

ի նկատ կ'առնու այն խորին և բարձր խմաստներն , որոնք իրենց մէջ կ'պարունակեն խորագոյն սկզբունքներ կամ ճշմարտութիւններ , Յիսուսի էական յատկութեան կամ պաշտօնին վերաբերմամբ , իբր անոր զօրութեան և գործին բուն յայտարար նշաններ :

Հասցերուն անսկնկալ բազմացումը՝ որ նկատական անհրաժեշտ պէտքի մը գոհացում կուտար՝ խորապէս կ'յուզէ ահագին ամբոխը , մինչեւ անգամ արտասովոր շարժումի մը մղելով զանոնք : Յիսուս խոյս կուտայ անոնցմէ և առանձին կ'ենէ լերան մը վրայ : Այդ դէպքն նորութիւն մը չէր . արդէն նա շատ անգամ իւր աշակերտներուն հետ բացօթեայ տեղեր կ'գիշերէր , մերթ նաւակի մը մէջ մնալով , մերթ լեռներուն վրայ հանգչելով , որոնք լիճը հեռուէն կ'աբստէին , և ուր ոգն մաքուր և առողջարար էր և հորիզոնն լուսաւոր և ջինջ : Հաւատացեալներու ստուար խումբ մը ուրախութեամբ հետեւելով Մեծ Վարդապետին՝ անոր ներշնչումներն կ'հաւաքէր : Երբեմն պարզ և աննենդ տարակոյսի մը , և երբեմն ալ թերահաւատ հարցումի մը , Յիսուս շնորհալի ժպիտով մը կամ գլխոտ նայուածքով մը լուծում կուտար և կ'պատասխանէր :

Յիսուս դեռ լեռը չելած , իւր աշակերտներուն կ'պատուիրէ նաւակով անդիլի կողմը՝ Կաթառնաում անցնիլ : Աւետարանիչն այդ կարգադրութեան ներքին պատճառն կ'բացատրէ այսպէս : Ժողովուրդը հրաշքով սքանչացած , Յիսուսի յարելու յօժարութիւն մը ցոյց կուտայ , համոզումի իրական արտայայտութեամբ վկայելով , թէ «Սա է ճշմարիտ մարդարէն» : Այդ խոստովանութիւնն անկեղծ ըլլայ կամ ոչ , իրողութեան ազդած և ներշնչած աստիճանը և ժողովուրդին կրած խոր տալաւորութիւնը ցոյց կուտայ : Աստուածորդին արտաքին շքեղութեան մէջ տեսնելու տենչն ու բազմանքը նոր չէր , բայց նա կ'ըզուշանայ Գալիլիական այդ եռանդէն : Առաքեալները նաւակով և Յիսուս հրաշքով , անցած էին Կաթառնաում : Ժողովուրդն ի վրէր կ'սպասէր Իրեն . նա արդէն գիշեր ատեն լեռնէն իջնելով իւր աշակերտներուն ետեւէն հասած էր իր տեղը : Բազմութիւնն յողնած և յուսախաբ՝ առաւօտուն կ'վերադառնայ Կաթառնաում , և հոն տեսնելով զՅիսուս , ամէն ոք զարմանքով կ'հարցնեն Անոր — Ե՞րբ ե կ'ի՞ր այս ր : Այս

տեղ կ'սկսի Յիսուսի և հրէից միջեւ խօսակցութիւն մը, որ է երկնաւոր հացին վարդապետութիւնը:

Սոյն խորհմաստ ճառն մերթ ընդ մերթ ժողովուրդէն ընդհատուած է, դժուարութիւններ հանելու և կամ բացատրութիւններ պահանջելու համար: Այդ ընդհատումներն մեծապէս առիթ կ'ընծայեն Մեծ վարդապետին, Իւր խօսքերը աւելի պարզելու և նպատակն ճշդելու: Քարողին ընդհանուր գոյնը Յիսուսի հաց լինելու դադարաբաժին շուրջը կ'յաժի, որուն տենդոս գրգիռներով և աղմուկներով կ'հակառակին ընդդիմախօսները: Վտան գի Հրեայք Յիսուսի խօսքերուն ներքին իմաստը չ'հասկնալով, այլ և այլ մեկնութիւններ կուտային անոնց: Հինգ հացերու հրաշքէն կրած տպաւորութիւնին մոռնալով, անկէ մեծ հրաշք մը կ'պահանջեն իրեն հաւատարմութիւնը համար:

«Ձի՞նչ նշան առնիցես զի տեսցուք եւ հաւատասցուք»:

Հրեայներուն նիւթական փափաքին համեմատ, Յիսուս երկրաւոր հացեր շատցուցեր էր, ինչպէս Մովսէս ալ երկինքէն հաց (մանանայ) իջեցուցեր էր: Այս և այսպիսի մտածումներ, հրէական ազգին ոգորմելի նկարագիրը ցոյց կուտան, և ասոնց ամենուն չարժաւորիթն է իրենց անհաւանութիւնը: Յիսուս՝ հրեայներու հանած դժուարութիւնները առ ոչինչ համարելով՝ կ'հաստատէ թէ Մովսիսի գործած հրաշքն ուղղակի Աստուծմէ էր, և թէ երբեմն Աստուած մարմինին իբր սնունդ հաց զըրկած էր, իսկ հիմա՞յ հոգիի սնունդին ճշմարիտ հացը կ'յղէ, և թէ Ինքն է այդ Կենաց հացը: Այս տեսութեամբ իւր աշխարհ գալուն պատճառը կ'պարզէ, որ է ամենուն փրկութիւն և կեանք շնորհել, և կ'յայտարարէ թէ այդ իւր Հօրը կամքն է: Յիսուսի տուած փրկութիւնն այս աշխարհի մէջ կ'սկսի հաւատքով, իսկ «յաւուրն յետնում» յարութեան արժանանալով:

Ունկնդիրներն այս նոր յայտնութիւններն լսելով՝ խուլ քրթմնչիւն մը կ'հանեն և կ'հծծեն իրարու՝ գայթակղութեան մը սարսուռով:

«Տրոնջէին զմմանէ Հրեայքն, զի ասաց, Թէ ես եմ հացն իջեալ յերկնից, եւ ըն.»:

Նազարէթցի հիւսան որդին ի՞նչպէս կրնար երկինքէն ի-

ջած ըլլալ, քանի որ իրենք լաւ կ'ճանչնային անոր թէ՛ հայրն և թէ՛ մայրը: Յիսուս ամբոյսին սխալ խնացումը կ'ուզէր աւելցնելով թէ փրկութեան հասնելու համար ո՛չ միայն իրեն հաւատալ հարկ է, այլ և հաւատալով՝ համար ալ Աստուծոյ շնորհքն անհրաժեշտ է:

«Գրեալ է ի մարգարէս, եւ եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ, ամենայն որ լսէ ի Հօրէ՛ գայ առ իս »:

Յիսուս այդ մարգարէական պատգամն յառաջ բերելով (Եսայի ԺԴ. 13) կ'ուզէ հասկցնել, թէ իր Անձին վրայ կրօնական ուղիղ համոզում մը ունենալն ալ Աստուծոյ մէկ շնորհքն է: Որով և Հօր և Որդւոյ հաճութեամբ և կամքով կ'կազմուի հաւատք մը՝ որ մարդը փրկութեան կ'առաջնորդէ:

Այս քարոզութիւնն, որ Ա. Հաղորդութեան խորհուրդին հիմն է, քրիստոնէական վարդապետութեան մէջ մեծ տեղ մը կ'զբաւէ իւր ամբողջութեամբը: Այդ խորհուրդին արժանաւորութեամբ հարկ է որ հետեւինք Յիսուսի դժած ճամբուն այս աշխարհի մէջ, զօրացնելով մեր հաւատքը և հանդերձեալին մէջ պատկուելու հաստատուն յոյսն ունենալով, զի «որ հաւատայ՝ ընդունի զիեանսն յաւիտենականս» (Զ. 47):

ԽՈՍՐՈՎ. Վ.

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾՈՒԹՅԱՆ

Դ. դարը ամենամեծ դարն է Քրիստոնէութեան համար: Յաղթանակի դարն է այն և հաղեւոր լուսոյ ճիշդ տիրապետութեան ժամանակը: Երեք ամբողջ դարեր քրիստոնէութիւնը դադարի և վնասակար ընկերութիւն մը նկատուելով գեղեցիկ ամբաններն ու խաւարչուս տեղերն ունէր միայն բնակավայր, բայց յետոյ աշխարհ ինքզինքը սլարտեալ խոստովանեցաւ հռովմէական յետին

մէկ դաւառէն եկած Կրօնին առջեւ՝ որ արմատացած էր արդէն ամենուրեք։ Կոստանդիանոսի տարած յաղթանակը Մաքսենտիոսի վրայ, քրիստոնէութեան վերջնական յաղթանակն էր կռապաշտութեան վրայ, որմէ ետքը խաչին երբեմն անարգ գործիքը նշան մը դարձաւ դօրութեան և վառաց։

Այս ժամանակն է որ Եկեղեցին ազատ շունչ առած իւր բոլոր պայծառութեամբը փայլիլ սկսաւ։ Անոր ամենէն մեծ հանճարներն այս դարուն մէջ երեւցան և ամենէն պերճախօս հայրերն այս դարուն մէջ ապրեցան։ Քրիստոնէական գրականութեան այս ոսկեդարը աշխարհի ամէն կողմն արտագրեց այնպիսի հսկայ միտքեր՝ որոնց չկրցան հաստատել հակառակորդներ։ Աթանաս և Ոսկեբերան, Հերոնիմոս և Օգոստինոս, Եփրեմ և Ներսէս, Եկեղեցւոյ ամենէն շողշողուն աստղերն, այս դարուն կ'վերաբերին և մէկ մէկ հաստատակաւ այն սխներ են անոր շէնքին, իրենց անունները անոր հետ անմահացնելով, և ինչպէս կ'ըսէ Վիլլմէն գաղղիացի մատենագիրը «ճարտարապետներն էին անոնք կրօնական այն մեծ շէնքին որ հռոմէական կայսրութեան պիտի յաջորդէր»։

* * *

Եկեղեցւոյ այս ճարտարապետներու խումբին ոչ փոքր մէկ անդամն եղաւ նաեւ Սուրբ Գրիգոր, Աստուածաբան մականունեալ հայրապետ։ Ծնած է տա շուրջ 326 թուին, Կապադովիոյ Արիանզա անուն գիւղին մէջ։ Հայրը, նոյնպէս Գրիգոր, ի սկզբան կ'վերաբերէր աղանդի մը որուն հետեւողները իրենք զիրենք բարձրելոյն պաշտօնեայ (Hypsistaire) (*) կ'կոչէին։ Գրի-

(*) Անշուշտ աղանդ մ'էր այս, խառն հրէութենէ և հեթանոսութենէ, կ'մերժէր կուռքերն և զոհերը և կ'հաւատար թարձրեալ Աստուծոյ մը, բայց միևնոյն ատեն պաշտօն մատուցանելով կրակի և ճրագներու։

գործի ծնունդէն տարի մը առաջ քրիստոնէական ճշմարիտ հաւատքը ընդունած էր նա իւր կնոջ ազդեցութեամբ և Նաղիանգայի եպիսկոպոս ձեռնադրուած է Բայց Գրիգորի մայրը այն նշանաւոր դէմքերէն մին է որ շատ հազուագիւտ են եկեղեցւոյ պատմութեան մէջ։ Ազնուական տոհմի շառաւիղ և քրիստոնէական ջերմ հաւատքով առլցեալ կին մը՝ որ փուշերու մէջ իսկ ձգուելով կրցաւ ոչ միայն բաղմնապատիկ պտուղ բերել, այլ և փուշերէն իսկ պտուղ քաղել։ Նոննա իւր ամուսնութենէն քիչ ժամանակ յետոյ՝ իւր առած հաստատուն դաստիարակութեանը շնորհիւ կրցաւ ճշմարիտ հաւատքի դարձնել իւր այրը և իւր այդ յաջողութեանը համար ուխտեց Ստուծոյ նուիրել իւր անդրանիկ որդին՝ Գրիգորը։

Այսպէս Գրիգոր, ուխտի զաւակ ըլլալով մանկութենէն ի վեր վայելեց իւր այդ ճիշտարհիկ մօր գորովալի խնամքը, բան մը զոր ինքն իսկ մանրամասն կ'նկարագրէ իւր ինքնակենսադրութեանը մէջ, ցուցնելով մեզ թէ քրիստոնեայ և հաւատացեալ կին մը որչափ մեծ ազդեցութիւն կրնայ ունենալ իւր զաւակներուն մտաւորական և բարոյական կեանքին վրայ։

Գրիգորի նախնական կրթութիւնը իւր հայրենի տան մէջ եղաւ, բայց ուսման և մանաւանդ ճարտարխօսութեան համար ունեցած բնական տենչը զինքն մղեցին իւր հայրենիքէն դուրս։ Յաջորդաբար գնաց երկու կեսարիաներն և Աղեքսանդրիա, բայց միայն Աթէնքի մէջ կրցաւ իւր փափաքը յագեցնել, ուր մնաց մինչեւ իւր երեսնամեայ հասակը, իւր աշակերտակցին Մեծն Բարսղի հետ։ Բայց սակայն առանձնութեան համար ունեցած բուռն սէրը և իւր այս մտերմին (Բարսղի) հրաւերներն թոյլ չտուին իրեն ո'չ Աթէնք և ո'չ իւր հայրենիքը մնալու, ընդհուպ Պանոփսի մէկ լեռը եղաւ այս երկու երիտասարդ փիլիսոփայներուն ճգնաբանք։

Պարագայները սակայն ստիպեցին ՂԳրիգոր շուտով իւր առանձնութիւնը թողուլ և իւր հայրենիքը դառնալ

իւր հօրը օգնելու համար՝ որ զինքն Կեսարիոսեանց համալիտ ցուցնելով իւր թեմին ժողովուրդն ու կղերը գրգռեր էր իրեն դէմ։ Գրիգոր անմիջապէս հանդարտեցուց միաբերը և իւր այս ծառայութեանն ի վարձ, հօրմէն ընդունեց քահանայութեան աստիճանը, թէեւ բռնի։ Քիչ ժամանակ ետքը միեւնոյն ծառայութիւնը ըրաւ Գրիգոր իւր մտերմին Բարսղի, որ իւր օգնական կանչուելով Կապադովկիական Կեսարիոյ Եւսեբիոս եպիսկոպոսին քով, իւր պերճախօսութեամբ բոլոր ժողովուրդին սիրաւ իրեն գրաւած էր, և եպիսկոպոսին նախանձը շարժելով՝ դժառութեան մը առիթ եղաւ։

Եւսեբիոսի մահուանէն յետոյ երբ Բարսեղ անոր յաջորդեց, անմիջապէս եպիսկոպոս ձեռնադրեց իւր ընկերը այդ թեմին Սողիմա անուն աննշան գիւղին վրայ։ Գրիգոր դժկամակելով ընդունեց և քիչ ատենէն ժողովուրդին անհանդարտ բարուց պատճառաւ փութաց իւր նախկին ճգնարանը առանձնանալու։

Իւր հօր ծերութիւնն ու մահն ալ շուտով եկան իւր խաղաղիկ կեանքը խռովելու, վասնզի Նաղիանդայի ժողովրդեան թախանձանքին վրայ հաւանեցաւ քանի մը տարի իւր հօր հօտը հովուելու։ Բայց Գրիգոր հոն ալ չկրցաւ յարատեւել, և ծնողացը հետ իւր Կեսարոս եղբայրը և Գորգոնիա քոյրը կտրոնցնելով քանի մը ամիսէն յետոյ՝ ի Սելեւկիա (Իսաւրացոյ) առանձնացաւ իւր ազգականներուն քով։

Սակայն բախտը ասոնցմէ բարձր պաշտօններ պահած էր Գրիգորի։ Անոր համբաւը մինչեւ Կոստանդնուպոլիս հասած էր արդէն, ուր Նիկիական հաւատքին հաւատարիմ մնացած փոքրութիւ ժողովուրդը զինքն կոչեց իրեն հովիւ ըլլալու։ Գրիգոր հոն ալ անմիջապէս վաղեց և իւր ճարտար ու գրաւիչ լեզուով ու ընթացքով այնքան մեծ ազդեցութիւն յաջողեցաւ գործել որ քիչ ատենէն պատրիարքական աթոռը բարձրացաւ (376 ին)։

Այս նոր պաշտօնին հետ Գրիգոր ամենէն աւելի սի-

րով կապուեցաւ : Վաղէս կայսեր (364—378) վերջին տարիներուն մէջ իւր հօտին հետ բաւական հալածանք կրելով հանդերձ Արիանոսաց ձեռքէն, յաջողեցաւ սակայն իւր պերճախօսութեամբը ժողովուրդին համակրանքն իւր վրայ պահել, բայց երբ Մեծն Թէոդոս (379—395) վերջ տուաւ Արիանոսաց տիրապետութեան և Նիկիականք յաղթանակեցին, այն ատեն Գրիգոր իւր անյարմարութիւնը ցոյց տուաւ վարչական գործերուն մէջ. տակաւ առ տակաւ ժողովուրդը իրմէ ուժանալ սկսաւ և վերջապէս ստիպուեցաւ իւր հրաժարականը տալ կղերին պահանջմանը վրայ (381 ին) :

Գրիգոր գեղեցիկ քարոզով մը իւր հրաժեշտի ողջոյնը տալէն յետոյ դարձաւ իւր հայրենիքը. Կեսարիոյ մէջ, յուզիչ դամբանական մը խօսեցաւ Ս. Բարսղի վրայ՝ որ երկու տարի առաջ վախճանած էր : Իւր վերջին օրերը Արիանդայի մօտերը, գիւղի մը մէջ անցուց Գրիգոր, գրականութեամբ և փոքրիկ պարտէզի մը մշակութեամբն զբաղելով : Այդ փոքրիկ գիւղին մէջ անշուք և անշշուկ մեռաւ (389 ին) Կոստանդնուպոլսոյ Աստուածաբան Պատրիարքը :

* * *

Եթէ Գրիգորի կեանքին վարչական կողմը կրնայ լճերի նկատուիլ, բայց իւր անունը անմահացնողը և սրբոց դասին բարձրացնողը իւր սիրտն ու հանճարն է որով հմայեց իւր ժամանակակիցներն և դեռ կ'հմայէ զինքն ընթերցողները : Ս. Բարսեղէն ետքը միակ եկեղեցական մատենագիրն է նա որ գիտցաւ ճարտարութեամբ հաշտեցնել իւր գրչին ներքեւ, հին աշխարհը նորին հետ, ոչ ձք մինչեւ այն ատեն խորհած էր հեթանոսական կրօնը և անոր գիտութիւնները քրիստոնէական կրօնին յօգուտ գործածել : Մանաւանդ այնպիսի ժամանակի մը մէջ յորում Յուլիանոսի հրամանաւ հելլէն գալրութեանց և գիտութեանց տաճարներուն դռները փակուած էին

քրիստոնեայներուն համար: Նա, հակառակ իւր Աստուածաբան մականունան, չէր սիրէր սակայն սովորական դարձած վարդապետական վէճերու մէջ մտնել և անոնց վրայ ճառել, այլ իւր քարոյներուն նիւթը՝ քրիստոնէական բարոյականն էր սովորաբար, բան մը՝ որ իւր հրաժարման պատճառներէն մին եղած կ'ըլլար:

Մեր եկեղեցին ալ ի սկզբանէ անտի պատուած է յոյն եկեղեցւոյ այս մեծ հայրապետը: Ե. դարուն հայրերը սքանչացմամբ հայերէնի թարգմանած են գրեթէ անոր բոլոր ճառերը և իրենց գրուածներուն մէջ միշտ առաջնակարգ տեղ մը տուած են Աստուածաբանէն քաղուած վկայութիւններու, այնպէս որ՝ ասկէ դատելով՝ հեռաւոր հնութեան մը կրնանք հանել անոր տօնման սկզբնաւորութիւնը, և թերեւս մինչեւ Ե. դար: Գրեթէ ամբողջ տասնհինգ դարեր ուրեմն պատուած և յարգած է Հայ. եկեղեցին Նազիանդացի Գրիգորին յիշատակը, թէպէտ նա հակակրանքով կ'ըսուէր հայ ժողովուրդին վրայ՝ զոր «թագուցանող և նենդաժող» կանուանէր: Այսքան ներողամիտ է Հայ եկեղեցին՝ քրիստոնէական կրօնի հաստատութեանը համար գործող ամեն անձնաւորութեանց հանդէպ, առանց աղգի խտրութեան:

ԶԱՒԷՆ Վ.

ՆԱԽՆԵԱՅ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆԸ



Ամենէն անքաղաքակիրթ ազգաց կրօններու մէջ ալ՝ Ապաշխարութիւնը յիշեցնող զանազան սովորոյթներ գտած են կրօնից պատմութեամբ զբաղող գիտունները. այսպէս, Ափրիկէի հարաւակողման Կ ա փ ր երու պատանեաց դաստիարակու-

թիւնն ու ընծայութիւնը՝ պատրաստելով համար զանոնք իրենց աստուծոյն որդեգրութեան՝ կ'նմանի քրիստոնէական մկրտութիւն ընդունելով պատրաստուող երախայից ապաշխարութեանը . — աւելի կանոնաւոր և ո՛չ նուազ խիստ սովորութիւններ կան նաեւ կոմիւնիկեան և մանաւանդ պուտտայական կրօնից մէջ :

Միաստուածութեան կատարելագոյն կրօնքին մէջ եւս կարեւոր նկատուեցաւ ապաշխարութիւնը .

Հին կտակի «օրէնք»ին մէջ երեւցած դատական կանոնները՝ կրնան իբր բռնի ապաշխարութեան ձեւ մը նկատուիլ :

Ասոնք ամէնը՝ սակայն՝ մարմնական նիւթական ապաշխարութիւններ էին . Յանկարծ երեւցան Իսրայելի մէջ կարգ մը մարդիկ , որք բոլորովին տարբեր ապաշխարութիւն մը կ'պահանջէին . Անոնց համար՝ վրկութիւնը ո՛չ թէ զոհերով , ծիսական լուացումներով , շարժելով խտրել պահելով պիտի ստացուէր , այլ ողորմութիւնով և խղճի մաքրութեամբ : Ասոնք էին Սամուէլի և Եղիայի նախկին դպրոցներուն հետեւող մարգարէները , որոց վերջինն եղաւ Յովհաննէս Մկրտիչ՝ քարոզելով . «Ապաշխարեցէք , զի մերձեալ է արքայութիւն երկնից» :

Ի՞նչ էր Յովհաննու հրամայած ապաշխարութեան արժանի պտուղը .

— «Մի՛ ինչ աւելի քան զհրամայեալն ձեզ առնիցէք» . կը պատասխանէր մաքսաւորներուն .

— «Մի՛ զոք խուլիցէք , մի՛ զոք զրպարտիցէք , շատ լիցին ձեզ թողալքն ձեր» . կ'պատասխանէր պաշտօնեայներուն . և՛ աւելի պարզ՝

— «Ով որ երկու զգետտ ունի՝ թող մին տայ չ'ունեցողին» . կ'պատասխանէր ժողովրդեան : — Այս բացատրութիւնները կը շօշափեն իւր նախորդաց մեծադոյն պատգամը . «Զողորմութիւն կամիմ և ո՛չ զզոհ» :

Քրիստոս եւս իւր առաջին քարոզութիւնը «ապաշխարեցէք»ով սկսաւ :

Ապաշխարութիւնը կ'ենթադրէ յանցանք մը , մեղք մը : Քրիստոս որոշ բառերով մեղաւորները դարձի բերելու պատուէրներ կուտայ .

— «Եթէ, կըսէ, եղբայրդ քեզի դէմ մեղանշէ՝ յանդիմանէ՝ զանի՝ երբ դուն և նա միայնակ կ'լինիք, եթէ քեզ մօտիկ ընէ՝ եղբայրդ չահեցար. ապա եթէ մօտիկ չ'ընէ՝ հետզ առ ուրիշ մէկ կամ երկու հոգի ալ, վասնզի երկու կամ երեք վկայներով ամէն բան կ'հաստատուի. իսկ եթէ անոնց ալ մօտիկ չ'ընէ՝ հրապարակաւ կամ համախմբութեան առջեւ յանդիմանէ՝ զանի. և եթէ այդ հրապարակային յանդիմանութենէն ալ չ'ազդուիր, դուրս թող վանուի եղբայրութենէն և համարուի քեզ համար իբրեւ հեթանոս և մաքսաւոր» (Մատթ. ԺԲ. 15—17)։ Մեղաւորներն յանդիմանելու՝ կապելու և արձակելու այս իշխանութիւնը իւր բոլոր Առաքելոց տուաւ Քրիստոս։ (Նոյն համար 18)։

Արդ, Առաքեալներու յաջորդները՝ անոնցմէ ձեռնադրուելով՝ այդ իշխանութիւնը իրաւամբ իրենք ալ գործադրեցին։ Բայց հետզհետէ բրիտանական եղբայրութիւնը բաղմանալով՝ բնականաբար այդ տեսակ մը դատաւորական կիրառութիւնն ալ դժուարացաւ, և նախկին եկեղեցական Հայրեր ստիպուեցան օրէնքի կանոնի տակ առնել ապաշխարութիւնը։ Ո՛չ միայն խոբ հոբ գէներէն մին եղաւ այն, այլ և ունեցաւ իւր ծէսն ու արարողութիւնն՝ թէ՛ ընդհանրապէս և թէ՛ մասնաւոր, այսինքն տարուան մէջ որոշ ապաշխարութեան օրեր սահմանուեցան ընդհանուր ժողովրդեան մեղաց համար, ինչպէս ծով՝ պահէ՝ հսկում ելն. իսկ մասնաւորաց մեղքերու համար՝ յատուկ կարգ մը կամ կանոն մը սահմանուեցաւ. այս է՝ «կանոնաւորապէս ըստ ըստ»։

Առաջին դարերում «կանոնաւորապէս ըստ ըստ» կրնայ լինել. այժմ մտադիր ենք խօսիլ երկրորդին վրայ, որ թէպէտ պատմադէտներու համար նորութիւն մը չէ, այլ իբրեւ նախկին Եկեղեցւոյ սովորութիւններէն մին՝ կ'արժէ ծանօթացնել մեր ժողովրդեան, որպէս զի բաղդատէ՝ այժմեանին հետ։

Առաջին դարերում «կանոնաւորապէս ըստ ըստ» երեք տեսակ էր. անոնք որ մեղք մը կ'գործէին՝ Ս. Հագորութենէ կ'զրկուէին ժամանակ մը և կ'կոչուէին «անշատեալք». աւելի ծանր մեղք գործողները՝ այսինքն երկրորդ կարգի մեղաւորք՝ ո՛չ միայն Ս. Հագորութենէ՝ այլ և

եկեղեցական արարողութեանց մասնակցելէ կ'զրկուէին. խի մահացու մեղք գործողները (մարդասպանք, կռապաշտք և շնացողք)՝ բացարձակապէս կ'վռնտուէին քրիստոնէական անդամակցութենէ և իրենց անունները կ'ջնջուէին :

Եպիսկոպոսն էր որ այս խտուրթիւնները կ'գործադրէր. բայց նորա մօտ կար սարկաւադ մը, որ անմիջապէս ապաշխարողին կը մօտենար դժութեամբ, կ'յորդորէր՝ կ'զղջացնէր և վերջապէս անոր արձակման համար կ'միջնորդէր եպիսկոպոսին մօտ : Այս գրկմանց երեք տեսակին ալ իբր դարման՝ ծով կ'հրամայուէր երկու՝ երեք՝ հինգ՝ կամ եօթն շաբաթ (յանցանքի մեծութեան համեմատ). ապա արձակման աղօթք մը կ'կարդացուէր ապաշխարողին վրայ : Եթէ ոք՝ այս գրկումները անդամ մը կրելէ վերջ՝ չուզէր կանոնական ծովն ու ապաշխարանքը քաշել, խալառ կ'մերժուէր եկեղեցիէն և կ'համարուէր իբր «հեթանոս և մաքսաւոր» : (Ab. Martigny, Dict. des Antiquités chrét., Paris, 1877, p. 626):

Սակայն այս նախնական ձեւը՝ լսկ եպիսկոպոսի մը իշխանութեան տրամադրելի, չատ մը չափազանցութեանց՝ զեղծմանց և տրտունջներու տեղի տալով՝ փոխուեցաւ, և աւելի ողջամիտ ոգւով կանոնաւորուեցաւ Գ. դարում :

Չորս աստիճանի վերածուեցան ապաշխարողները. 1. Ողբացողք (pleurants), 2. Ունկնդրողք (écoutants), 3. Ծնրադրողք (prosternés) և 4. Ոտնակացք (consistants):

Ողբացողք այն ծանր յանցաւորներն էին՝ որք չէին համարձակեր եկեղեցի մտնել, այլ իրենց աղօթքներն ու նուէրները ուրիշի մը միջոցաւ կ'զրկէին հօն. Ունկնդրողք՝ որք թէպէտ կը մտնէին եկեղեցի՝ այլ գաւիթը կենալով՝ ապաշխարական և հրահանգիչ աղօթքներուն միայն կ'ունկնդրէին, բուն պատարագին՝ երախայից հետ («մի ոք յերախայից» քարոզի ատեն) դուրս ելնելու պայմանաւ. Ծնրադրողք՝ թէպէտ տաճարին մէջ, այլ ծուներ դրած՝ ներկայ կը գտնուէին արարողութեանց և երախայից հետ դուրս կ'ելնէին. Ոտնակացք՝ արժանաւորաց հետ բոլոր արարողութեանց (բուն պատարագին ալ) կ'մասնակցէին ոտքի վրայ կանգուն՝ միայն Ս. Հաղորդութիւն չէին ընդուներ :

Ազաշխարութեան այս աստիճանաւորումը աւելի Արեւելեան եկեղեցւում կ'գործածուէր. Ս. Գրիգոր Սքանչեւագործ և Ս. Բարսեղ Կեսարացի՝ իրենց ճառերու մէջ՝ յաճախ կ'ցուցնեն այդ աստիճանները :

Արդ, տարակոյս չ'կայ թէ Հայ. եկեղեցին ալ ընդունած էր այս ազաշխարութեան աստիճանները. Մեր Կանոնադիրքը լի է ադոր հետքերով: Քանի մը օրինակներ.

Թաղէոս Առաքեալի վերադրուած Կանոնաց ԻԹ.ը հետեւեալ ազաշխարութիւնը կ'դնէ լպիրճ մեղքի մը համար. յանցաւորը իր տարիքին թուոյն չափ տարի «ընդ ուն կնդ ի րս կացցէ» . ապա 5 տարի ընդ ձեռամբ, ապա «մոցէ յեկեղեցի ընդ ժողովուրդսն», և «ի վախճանին հաղորդեսցի» .

Փիլիպոս Առաքելոյն վերադրուած Կանոնաց մէջ կը յիշուի, «եթն ամ արտաքոյ եկեղեցւոյ ազաշխարեսցէ, տասն ամ յեկեղեցին մոցէ և ելցէ ընդ ազաշխարոյս, և ապա հաղորդեսցի ընդ օրինաց» :

Այսպէս յայտնի տկնարկութիւններ կան «Նիկիական» կոչուած Կանոնաց Ա. և ԺԳ.ին մէջ և «Ներկրորդ Նիկիական» կոչուածին ԺԲ.ին մէջ: Ս. Գրիգոր Լուսաւորչի վերադրուած Կանոններու մէջ ալ շատ կան. «Է ամ արտաքոյ, Բ ամ ի ներքս ազաշխարելու և Բ ամ անհաղորդ մնալու պատիժը: Ատոնք ուն կնդ ր ու թ իւ նը՝ ծնրադրուած թիւնը և ոտնակաց ու թիւնը կ'յլեցնեն կատարելապէս: — Առաջինը՝ այսինքն ողբացողաց աստիճանը շատ չ'յիշուիր և այժմու գիտնականներէն ոմանք ընդունուած ձեւ մը չեն համարեր դայն .

Հոս անցողակի ըսենք որ ոչ-քրիստոնեայ մը՝ մկրտուելէ առաջ՝ այս «Կանոնական ազաշխարութեան» չորս կամ՝ աւելի ճիշդ՝ երեք կարգերէն ալ կ'անցնէր :

Իսկ ազաշխարողները արձակելու համար յատուկ արարողութիւն մ'ալ կայ ի հնուց մնացած՝ ինչպէս ընդհանուր Եկեղեցւոյ՝ նոյնպէս Հայ. եկեղեցւոյ մէջ: Մեր Մայր-Մաշտոցը յատուկ գլուխ մ'ունի «Կանոն դմեղուցեալսն յազաշխարութիւն կոչելոյ», որ աւելի ճիշդ կ'ըլլար եթէ ըսուէր՝ «Կանոն զազաշխարողսն արձակելոյ», զի արարողութիւն մ'է՝ նման Աւագ Հինգչաքթի օրուան ճաշուի ատեն կատարուածին,

և յիրաւի այդ օրը սովորութիւն էր արձակել ապաշխարողները և հաղորդել, սովորութիւն մը՝ որ հետզհետէ քնդհանուր ձեւ մ'առած է:

Ինչպէս միւս եկեղեցեաց մէջ՝ Հայ՝, եկեղեցւոյ մէջ ալ հետզհետէ բազմացաւ ապաշխարութեան պէտքը, միշտ այդ երեք ձեւերու վրայ դառնալով: Այդոնք էին եկեղեցւոյ դրած պատիժները՝ իր մեղաւոր հաւատացեալին վրայ, յետագայ դարերում հետզհետէ կազմուած բոլոր կանոնաց ալ զանցառութեան իբր պատիժ՝ այս կանոնական ապաշխարութիւնը կ'դրուէր:

Բայց ո՛րքան մանրամասն, ո՛րքան խիստ, ա՛յնչափ սակայն խորին բարոյական ազդեցութիւն մը կ'դորձէր հաւատացեալ բարեպաշտիկ ժողովրդեան վրայ: Յանցաւոր մը՝ իր խիղճը մաքրելու համար՝ կ'ծռէր քահանային առջեւ, և՛ իր մեղաց աստիճանին համեմատ՝ կանոնական ապաշխարութեան հրահանգը կ'ընդունէր:

ՄԱՇՔԱՅ Վ.

ՏՈՄԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՂԸ

Մեր նախկին դարերու մէջ գումարուած ժողովներուն խնդրոյ առարկայ եղած է Տոմարի նորոգութիւնն ու կարգադրութիւնը: Առաջին անգամ կ'յիշուի թէ վեցերորդ դարու մէջ՝ 551—552 թ ժողովով կ'կարգադրուի Ջատիկ տօնը, որ իսխատուած էր՝ Անդրէասեան 200 տարւոյ շրջանը լրացած լինելով, և եկեղեցական տօները շփոթուած էին: Այդ բանին դարման մը տանելու նպատակաւ ժողով մը կ'գումարուի և անտեղութեանց վերջ կ'տրուի: Այսու ամենայնիւ ժամանակակից պատմիչ չ'գոյութիւնը զանազան ենթադրութիւններու տեղի տուած է, և կերպ կերպ ժամանակագրական սխալներու ալ պատճառ եղած: Տոմարի կարգադրութեան ձեւնար-

կող առաջին անձը, ո'վ պէտք է համարել, կամ այդ բարեկարգութեան հետամուտ արժանաւոր եկեղեցականը այն ժամանակին մէջ ո'վ էր։ Այս մասին դիմելով պատմչաց վկայութիւններուն, ձեռնունայն կ'ենենք անոնց տարաձայնութեանց և ժամանակագրական անձեղութիւններու պատճառաւ։ Պատմչաց մեծագոյն մասին վկայութեան վրայ հիմնուելով կարծուած է թէ հայական տոմարի առաջին կարգադրութիւնը ըրած է Մովսէս Եղիվարդեցի Կաթողիկոսը։ Բայց՝ ընդհակառակը՝ երբ անոնց ժամանակագրութիւնը ձեռքենք, այն ատեն կ'տեսնենք թէ Մովսէս Տոմարի առաջին կարգադրութենէն շատ տարիներ յետոյ կաթողիկոսացած է։ Այդ կարգադրութիւնն յիշատակող պատմիչներն են Յովհան Մամիկոնեան, Յովհան Կաթողիկոս և Վարդան, իսկ Ստեփաննոս Ասողիկ Տարոնեցի, որ Ժ. Դարու մէջ կ'ապրէր, կ'ընդի անոնց ուղղութենէն և որոշ ժամանակագրութեամբ մը կ'ընծայէ այդ դործը Ներոէս Բ. Բագրեւանդացիին, որ դարուն մէջ նշանաւոր տեղ մը կ'վայելէ Ասորեսց հետ ունեցած յարաբերութիւններովն և եկեղեցական բարեկարգական կանոններով։ Այսպիսի պարագայի մը մէջ աւելի ծանրակշռութիւն տալ հարկ կ'լինի այն պատմչին որ ըստ կարելոյն զէպքերն որոշ և ժամանակագրութիւնները ձիւղ ներկայացնելու հետամուտ եղած է։

Ասողիկ բաւական հմտութեամբ և կարգաբանութեամբ կը պատմէ իւր ժամանակի և դարեր առաջ տեղի ունեցած դէպքերը, ուստի կրնանք անոր ժամանակագրութեան վստահիլ։ Տոմարի կարգադրութեան համար կ'դրէ պատմիչը. « Եկաց Կաթողիկոս Տէր Ներոէս ի գաւառէն Բագրեւանդայ ի գեղէն Աշտարակաց՝ ամս Թ։ Սա ի չորրորդ ամի հայրապետութեան իւրոյ արար ժողով ի քաղաքն Դուին։ Եւ էին գլխաւորք ժողովոյն Պետրոս եպիսկոպոս Քերթող Սիւնեաց և Ներշապուհ ի Տարօնոյ, և կարգեցին ղթուականն Հայոց ի ԺԴ.ն Յուստիանոսի կայսեր, և ի ԻԴ.ն Խոսրովայ՝ որդւոյ Կաւատայ արքայի Պարսից» (էջ 82—83 տպ. ի Ս. Պետր. 1885)։ Այս կտորին մէջ Յուստիանոսի (*) ԺԴ.ն պիտի լինի

(*) Յուստիանոսի գահակալելուն Թուականն է 527 ը, իսկ Խոսրովինը 530։

ԻԴ: Ձեռագրաց մէջ գիւերին է ԻԴ.ն կարդալ ԺԴ., այս տեսակ սխալներ և գրերու շփոթութիւններ ստէպ կ'տեսնուին գրչագրաց մէջ: Խոսքովու ԻԴ. (24) տարին Ներսիսի մահուան թուական կարելի է համարել, որովհետեւ եզտիբուղտ վկային մահուանէն վերջ (553) հացիւ երկու տարի եւս ապրած է նա. իսկ Յուստիանոսի 24 ղ համապատասխան է 551—252 ին յորում Ժողովը դումարուած է Ներսիսի նախագահութեամբ:

Տոմարի կարգադրութեան մօտ թուականի մէջ ապրող պատմիչը Յովհան Մամիկոնեանն է (Է. դար). աւելի մեծ արժէք մը տալ հարկ պիտի լինէր անոր վկայութեան, եթէ իւր ժամանակին դէպքերն բաւական ստուգութեամբ յառաջ բերէր: Տոմարի կարգադրութեան խնդիրը այնպէս կ'յլլէ որ կարծես թէ ինքն ալ կ'իտակածի իւր ըսածին վրայ, և կ'երեւի թէ առանց քննելու ինչ որ լսած է գայն ի գիր տուած է:

Մամիկոնեանէ վերջ Յովհան Կաթողիկոս Մովսէսի ջատագովը կ'հանդիսանայ և անոր կ'ընծայէ այդ գործը, գրելով. «Յամի տասներորդի հայրապետութեան նորա (Մովսէսի), և 31 ամին Խոսրովայ որդւոյ Կաւտայ արքայի Պարսից, լցեալ բովանդակեալ չրջանակ բոլորակի 532 ամաց: Ապա ի հրամանէ Մեծին Մովսիսի՝ քերթողք և գիտունք արուեստին, եղին զկարգ թուականութեան Թորգոմեանս համարոյ» ևս: Յիրաւի 31 ըդ տարին Խոսրովու եղած է դարձեալ տոմարի կարգադրութիւն մը (*), բայց այս անգամ ալ կարգադրողը Մովսէս չէ, այլ ժամանակին Կաթողիկոսը Յովհաննէս Գաբեղեան (556—572): Թէպէտ և Յովհան պատմաբան Մովսէսին կ'ընծայէ այդ կարգադրութիւնը, բայց իր յիշած դէպքերն և ժամանակադրութիւնն կ'հակառակին այդ ենթադրութեան: Վարդանայ յառաջ բերած վկայութիւնը վերոյիշեալ պատմիչներուն վրայ հիմնուած է և չունի իրեն համար յատուկ ուղղութիւն մը, բայց ի խոշոր ժամանակագրական սխալներէ:

Տոմարի կարգադրութիւնը Մովսէսի վերագրուելուն պատճառն ուրիշ բան չէ, բայց եթէ անոր երկար պաշտօնավարութիւնը Կաթողիկոսական աթոռի վրայ, այսինքն 30 տարւոյ միջոց մը:

(*) Տոմարի երկրորդ կարգադրութիւնը եղած է 562 թուին Լաս Աղերսանդրացւոյն շրջանի վրայէն: Յակոբ Ղըիմեցին իւր տոմարին մէջ յառաջ կ'ընէր այդ պարագայն աւելի մանրամասնելով:

Եօթներորդէ դարու պատմիչներուն մէջէն Սերէոս և Մովսէս Կաղանկայտուացի, որոնք իրենց մերձաւոր ժամանակի եղելութիւնները մանրամասնութեամբ կ'ընեն, բնաւ այդ տեսակ դործ մը Մովսիսի չեն վերագրեր, յիշելով հանդերձ անոր անունն ու զանազան գործերը:

Ստոյգ է թէ Ներսէս Բ. Բագրեւանդացին է առաջին անգամ տոմարի կարգադրութեան համար ժողով գումարողը և այդ բանին վրայ խորհողը. այդ դէպքը ոչ միայն Ասողիկի վկայութեամբ կ'հաստատուի, այլ նաեւ Կաթողիկոսաց ճիշդ ժամանակադրութեամբը: Բաբգէն Կաթողիկոսի թուղթերը երեւան չեղած բաւական մեծ դժուարութիւն էր վեցերորդ դարու առաջին կիսուն Կաթողիկոսաց թուականները ճշդել: (*) Բաբգէն Կաթողիկոս և իւր յաջորդները մինչեւ Ներսէս Բ. 53 տարւոյ չափ պաշտօն կ'վարեն սկսելով 492 էն մինչեւ 545, այս թուականէն սկսեալ Ներսէս Բ. Բագրեւանդացին աթոռ նստած է և մինչեւ 555 պաշտօնավարած է, և ամենայն հաւանականութեամբ՝ տոմարի առաջին կարգադրութիւնը ինքն ըրած է 552 ին, թէեւ մեր պատմիչներն՝ ինչպէս տեսանք՝ բաց ի մէկէն՝ վերագրած են զայն Մովսէս Եղիմարդեցի Կաթողիկոսին:

Ա.Ղ.Ս.Ն Վ.

Ա Ի Ա Ն Դ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Աստուածաշունչը կանոնն է քրիստոնէական կեանքին. Ասի ամենուս համոզումն է, որուն զէմ ո՛չ ոք պիտի փորձէ հակառակը պնդել. Սուկայե՛, Աստուածաշունչին կից կայ նաեւ աւանդութիւն մը, որ զրէթէ

(*) Այս նամակները կը գտնուին Անտոնեանց զրադարանին Գ ի ր ք Թ ղ Թ ո ց զըջագրին մէջ որոց պատճէնը շնորհակալութեամբ ստացած եմք:

Ս. Գրքին չափ վաւերականութիւն գտած է, նոյն իսկ առաքելական հաստատութեամբ: Ս. Գիրքը Ս. Գիրքով բացատրելու կամ մեկնելու յաւակնող փորձը ձախողեցաւ նոյն իսկ իր առաջին քայլին: Եւ անոնք որ աւանդութեան վրայ նախ արհամարհող տէքով նայեցան, յետոյ ստիպուեցան ա՛ն պ ա շ ա տ օ ն ե ղ ա ն ա կ աւ, դիմել անոր, պարզելու համար Աստուածաշունչի խրթնութիւնները:

Ասիկայ իրաց բանաւոր ընթացքն էր անշուշտ: Որովհետեւ կարելի չէ երեւակայել ոչ մէկ ազգի մէջ, ու եւ է օրէնսդրութիւն, որ ամբողջովին ամփոփուած ըլլալ օրինական դրքերու մէջ, Քրիստոնէական Եկեղեցին ալ, հաւատացեալներու կեանքին կանոնը նկատելով հանդերձ Ս. Գիրքը, իր հաստատութեան օրէն իր մէջ ընդունեց աւանդական տարրը իբրեւ կարեւոր եւ մեծ օժանդակը այդ կանոնին բարւոյ կիրառութեան: —Մեր խօսքը այն աւանդութիւններուն վրայ է, անշուշտ, որոնք վաղնչական հնութիւն մ'ունին, եւ համաձայն են Ս. Գրքին: Յովհաննէս աւետարանչի սա խօսքը, թէ «է ե այլ ինչ բաղում, զոր արար Յիսուս, զոր եթէ զրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ ե ոչ աշխարհ սբաւա կան. էր տանել զգիրսն» (Յ. 45. ԻԱ. 25), ճշմարիտ պիտի ըլլայ շարունակ, նոյն իսկ կրօնական շրջանակէն եւ Ս. Գրքի կանոնականութենէն դուրս: Քրիստոս ու առաքեալները շատ բաներ խօսեցան ու քարոզեցին՝ բոլոր այդ խօսուածներուն եւ քարոզներուն ամփոփումը միայն կ'աւանդէր դրուած: Խօսուածներէն մեծագոյն մաս մը դուրս կ'մնայ այդ դրուածէն, եւ կ'կազմէ բուն աւանդութիւնը: Այս իմացումով աւանդութիւնը հաւատարար արժէք կ'ունենայ դրաւոր օրէնքին հետ, բաւական է որ անոր վաղնչականութիւնը կամ այդ դրաւոր օրէնքին հետ ունեցած սկզբնակցութիւնը հաստատուի քրիստոնէական եկեղեցիներու միաձայն վկայութեամբ: Աւանդութիւնը իր գործը կատարեց շարունակ,

և Եկեղեցիին մեծ կշիռ տուաւ անոր, Միայն Նոր-Եկեղեցիներն, որոնք Արեւմուտքի մէջ կրօնական-բարեկարգութեան ձեռնարկած ատեննին, ամէն բան մերժելու — բայ ի Ս. Գիրքէն — մարմաջն ունէին, Եկեղեցական աւանդութիւնն ալ մերժեցին, իրեւեկամուտ տարր մը, որ կրնար վնասել Ս. Գիրքին: Սակայն երբ կրօնական քննադատութեան կալուածն ընդարձակեցաւ, երբ իմաստասիրական դպրոցներն մանրակրկիտ քննութեան ենթարկեցին Ս. Գիրքի իւրաքանչիւր մասերն, այն ատեն անոնք, որ Ս. Գիրք պաշտպանելու պաշտօնին կոչուած էին, իրենց ձեռնարկութիւններն հաստատելու համար ստիպուեցան զիմել Ս. Հարց դրուածներուն, անոնցմէ քաղելու վարդապետական կէտերու բացատրութիւններ, պատմական ու ժամանակագրական ճշգրութիւններ, որոնք՝ աւանդութեամբ առաքելայններէն փոխանցուած էին նախկին Եկեղեցւոյ պաշտօնեայններուն, և հասարակաց հաւատքովը նուիրագործուած՝ կանուխ ժամանակաւ: Աւանդութիւնը մերժելու միտումը պիտի վտանգէր անշուշտ, Ս. Գիրքի վաւերականութիւնն ալ, որ իր հաստատութիւնը կ'պարտի աւանդութեան այնպիսի ժամանակի չը մէջ, երբ Ս. Գիրքը իր համէն ու հոտէն ճանչնալու պահանջը լաւ տպաւորութիւն չէր ընել որովմտութեամբ խորհողներու վրայ:

Թէ աւանդութեան մերժումը, որչա՛փ կրնայ վնասել քրիստոնէութեան դատին, կ'ուզենք օրինակով մը ցոյց տալ:

Վերջերս Շարաթ ապահն եր՝ աննշան թուով, ձեռնարկած են քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ գործածութեան դնել Սինայի օրէնքը՝ իր խիստ առումով՝ շարաթով ալ ապահնութեանը մասին: Ասոնց կարծեօք, կիւրակէն արժանի չէ փոխանակուելու այն օրուան հետ, զոր Աստուած օրհնեց ու սրբեց (Ծննդ. Բ. 3), իբր հանգստեան օր մը, իր և բոլոր ժողովուրդին

համար՝ Տասնաբանեայի չորրորդ պատուիրանը, այսինքն շաբաթի պահպանութիւնը, Սինայի բարձունքէն տրուելէ առաջ արդէն իսրայէլի նահապետներն զայն կ'պահէին, Եօթնեորդ օրուան այդ սրբութիւնն ու պահպանութիւնը սեմականին յատուկ չէր միայն, աշխարհի բոլոր ազգերը զայն կ'պահէին, միայն սա տարբերութեամբ որ հրեայներուն մէջ յայտնութեան լոյսը աւելի տարածուած, անոնք զայն նուիրագործած էին Աստուծոյ հանգիստով, Եօթնեակի վերջին օրուան անունն իսկ չաբաթ, անորոշ կերպով հանդիստ միայն կ'նշանակէ: Շաբաթի վերաբերմամբ Տասնաբանեայի այդ պատուիրանը անհրաժեշտ էր հրեայներուն, քանի որ «ընդ օրինօք» պիտի ապրէին անոնք: Քրիստոնեայ հասարակութիւնը, ըստ առաքելոյն, «ընդ շնորհօք» կապրի և ոչ «ընդ օրինօք»: Եւ եթէ Օրէնքը շաբաթը սահմանեց իբր օր հանգիստի, շնորհքն ալ իր կողմէն, միաշաբաթը նուիրագործեց: Մին՝ Հօրը նուիրեց հանդստեան օրը, և միւսը Որդւոյն, երկուքն ալ երկու խորհուրդներով, առաջինը՝ արարչագործութեան և երկրորդը մարդկային փրկութեան խորհուրդով: Այսպէս, Քրիստոնէութեան առաջին օրէն կ'տեսնենք քրիստոնեայ հասարակութիւնը, որ փոխանակ շաբաթի կիրակէն կ'պահէ սուրբ ու նուիրական, ատով արժանաւոր յարգանք ու մեծարանք մատուցած ըլլալու համար Քրիստոսի յարութեանը:

Կիրակէի պահպանութեանը մասին Նոր Կտակարանի կանոնական գրքերն որոշ ու գոհացուցիչ տեղեկութիւններ չեն բովանդակել: Ասիկայ, սակայն, պատճառ մը չէ ներթափրելու թէ կիրակէի պահպանութիւնը Եկեղեցւոյ հաստատութեանը չափ հին եղած չըլլայ: Առաքեալներն այդ օր կ'կատարէին իրենց պաշտաման հաւաքումներն (Յ. 4. 19): Ս. Պօղոս Տրովադայի մէջ կիրակէ օրը կ'քարոզէ անոնց և կ'հրահանգէ Քրիստոնէութեան մէջ (Գ. 17. 1. 7): Քրիստոնեայ հասարակութիւնը

ներ կիրակէ օրը կ'ընէին իրենց աղօթքին դուամարում-
ները ու այդ օր կ'հաւաքէին որբերուն և այրիններուն
տրուելիք նուէրները (Ա. Կրէթ. ԺՁ. 2): Պատմութի տե-
սանողը կիրակէ օրը կ'ընդունի մարգարէութեան ոգին
(Յայ. Ա. 10) « Ուրեմն Եկեղեցւոյ առաջին օրէն կիրա-
կէն «տէրունական օր» եղած էր արդէն, ինչպէս իր ա-
նունն ալ ցոյց կուտայ (կիրակէ = dies dominica = di-
manche):

Սակայն, եթէ այսչափ ըլլար կիրակէի մասին մեր
ունեցած ծանօթութիւնը, պահ մը պիտի վարանէինք
պաշտպանելու անոր նուիրականութիւնը՝ անոնց կարծի-
քին դէմ՝ որոնք կ'ուզեն շարաթի պահպանութիւնը մըշ-
տենջենաւորել, և որոնք ծանօթ են՝ ինչպէս ըսինք, Շա-
բաթապահ անունով, Հոս կ'ստիպուինք նորէն աւան-
դութեան դիմել, անոր մեղի տուած տեղեկութիւններու-
վը բացատրելու այն անբաւական կարծուած հատ-
ուածներն, զոր կ'տեսնենք Նոր Կտակարանին մէջ, կի-
րակէի մասին: Արդ, Տիտախի կամ «Վարդապետու-
թիւն Աւաքելոց» անուն գործը, (որուն խմբագրութիւնը
արդի քննադատութիւնը կ'ընէ Մատթէոսի Աւետարա-
նին ժամանակակից, կամ գոնէ Երուսաղէմի կործանմա-
նէն առաջ), յայտնապէս քրիստոնեայններուն կ'պատ-
ուիրէ. «Յաւուր կիրակէի ժողովեցար ու ք
առ ի բեկանելոյ՝ զհաց և դոհովիւն մա-
տուց անելոյ՝ յետ խոստովան լինելոյ միմեանց զմեզս
ձեր, զի սուրբ լիցի պատարադն ձեր» (ԺԴ. 1): Եւ Ս.
Յուստինոս վկայն, իր առաջին ջատագովութեանը մէջ
(որուն խմբագրութիւնը կ'գրուի 138—150 թուականին)
իրբեւ կանուխէն հաստատուած իրողութիւն մը կ'նկատէ
կիրակէի պահպանութիւնը, և կ'ըսէ «Յաւուրն որ
անուանեալ է Արեգական (dies solis, միա-
շարաթ) ամենեքին, որ իքսղաքս կամ յադարակս օ-
թեն; գան ի մի վայր և բանք յիշատակաց առաքելոցն
կամ դիւր մարգարէիցն ընթեռնուն» (Գլ. Կէ): Սուրբն

Յուստինոս այս առթիւ մանրամասնելով իր խօսքը , կ'ըսէ , թէ այդ կիրականօրեայ ժողովներուն մէջ քրիստոնեայնեանքը կ'ազօթէին , կ'հաղորդուէին , կ'քարոզէին և աղքատներու համար ողորմութիւն կ'հաւաքէին : Մեր հոգեշունչ քերթող Գ. Նարեկացին ալ . առ վանահայրն Կճաւայ գրած թղթին մէջ ցաւելով կ'սօսի Թոնդրակեցի աղանդաւորներէ Մուշեղի մասին , ըսելով , թէ « Եւ զօրհնաբանեալ զօր կիւրակէին , յորում արար (Քրիստոս) զլոյսն առաջին , և կատարեաց զլոյսն յարութեան իւրոյ ի նմին և զլոյսն կենարար դալստեան նովաւ տնօրինեաց , զայն պատկեր պաշտելի աւուր ընդ այլոցն զուգածութեալ նոցին թարգմանեաց » :

Ահա պարզ խնդիր մը , որուն լուծման յաջողութիւնը աւանդութենէն կախումն ունի : Առաքելական վկայութիւններն ու Ս. Հայրերու գրութեանքն կուգան լրացնել Ս. Գրքի համառօտ ծանօթութիւններն և մեզի կազմել կուտան ա՛յն համոզումը , թէ քրիստոնէական եկեղեցւոյ ծագմանէն , կիւրակէն նկատուեցաւ քրիստոնէութեան ս ու ը բ օ ը ը , իբր յաւերժական յիշատակ քրիստոնէութեան մեծ պատահարին , որ վեցօրեայ արարչութեան գործն աւարտեց , և կարկատեց մեզ ք ո վ րացուած խրամատը : Եւ երբ քրիստոնէութիւնը պետական կրօնը եղաւ , ժողովով կիւրակէի սրբութիւնն ալ կանոնապէս վաւերացուեցաւ , իբր նուիրական մէկ հնութիւնը եկեղեցիին :

Մենք կ'պահենք կիւրակէի սրբութիւնը , նախամեծար համարելով զանի շաբաթէն : Պէտք մը չենք զգար այս խնդրովն զբաղելու , որովհետեւ աւանդութիւնը Ս. Գրքին հետ միացած՝ ամէն բան կ'պարզէ մեր աչքին առջեւ : Բաց աչքով կ'տեսնենք աւանդութեան խորը՝ մեր քրիստոնեայ հայրերն՝ իրենց կիւրակէի հանգիստին մէջ : Միայն կ'մտածենք , թէ այսպիսի խնդրոյ մը առջեւ , որպիսի դժուարութիւններու կ'բաղխին անոնք , որոնք աւանդութիւնը կ'մերժեն :

ՄՈՒՇԵՂ , Վ .

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Առժամանակեայ խառն ժողովն՝ կայս. իրատէի մը համաձայն՝ Պատրիարքական Տեղապահի մը ընտրութեան ձեռնարկելով, ընտրուեցաւ Դեր. Տ. Բարթուղիմէոս արքեպիսկոպոս Չամչեան:

Ն. Գերապատուութեան պաշտօնը վաւերացաւ կայս. իրատէով:

Տ. Բարթուղիմէոս Սրբազան կայս. պալատ երթալով շնորհակալութիւն մատոյց և յետոյ իր առաջին այցելութիւնը տուաւ Բարձր. Մեծ Եպարքոսին և բոլոր նախարարներուն:

—Տ. Բարթուղիմէոս Սրբազան երէկ ալ կայս. պալատ երթալով ներկայ գտնուեցաւ Սէլամլըքի արարողութեան:

—Յառաջիկայ կիրակիէն սկսեալ եկեղեցեաց մէջ Դեր. Տեղապահ Սրբազանին անունը պիտի յիշատակուի փոխանակ նախորդ Պատրիարք Ամեն. Տ. Մատթէոս Սրբազանի:

—Առժամանակեայ խառն ժողովոյ որոշմամբ Պատրիարքարանի դիւանապետներէն յանձնաժողով մը կազմուեցաւ, որ Տ. Մեսրոպ Եպիսկոպոսի նախագահութեամբ պիտի կատարէ Պատրիարքարան եկած գրութեանց նախաքննութիւնը:

Նախորդ Պատրիարք Ամեն. Տ. Մատթէոս Սրբազան Հայրն իր բնակութիւնը Գումգաբուէն Սկիւտար փոխադրեց:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ. — Վիքդորիա Թագուհին փափաք յայտնեց որ «Անգլիոյ ամենէն երկարատեւ թագաւորութեան» հանդէսն, այսինքն՝ իւր գահակալութեան 60 ամեակը գալ տարուան թողուի:

— Ֆրանսայի և Ռուսիոյ դեսպանք երկար տեսակցութիւն մ'ունեցան Լ. Սալզպլերի հետ:

— Երեսփ. Ժողովոյ մէջ արտաքին գործոց խորհրդական Պ. Բըրզլէն յայտարարեց թէ անգլ. կառավարութիւնը լիակատար վստահութիւն ունի Կ. Պոլսոյ բրիտանեան գործակատարին վրայ, որ միշտ ճարտարութիւն ու տաղանդ ցուցած է իւր դիւանագիտական պաշտօնին կատարման մէջ: Իսկ դեսպան Սըր Ֆիլիք Բըրքի աշնան պիտի դառնայ իւր պաշտօնատեղին, ըսաւ խորհրդականը:

ՌՈՒՍԻԱ. — Ջարն և Ջարուհին պաշտօնապէս ծանուցին Վիլհէլմ Կայսեր թէ ներկայ պիտի ըլլան սեպտ. 5 ին (Ն. Տ.) ի Պրեսլաւ տեղի ունենալիք մեծ ռազմափորձերուն գերման բանակին, և երկու օր պիտի մնան: Հոկտ. ի սկիզբը Նոյցին Վեհափառութիւնք պիտի այցելեն Հէսի դքսական դերգաստանին, որուն կը պատկանի Ջարուհին:

— Ջարն ու Ջարուհին ոչ թէ սեպտ. ի սկիզբն այլ սեպտ. ի վերջը պիտի այցելեն եղբր Փարիզ:

ՅԲՆՆՍՍ. — Պ. Ֆէլիքս Ֆօռ կը պտըտի Պրըդանսի դաւառներուն մէջ, և շատ սիրով կ'ընդունուի Ժողովրդէն, որ Ֆրանսայի Ժողովրդեան զանազան տարրերուն

մէջ, ամենէն ուշ յարած է վարչային արդի (հանրապետական) գրութեան, բայց իւր յարած գրութեան ամենէն հաւատարմապէս պաշտպան կը հանդիսանայ միշտ:

ԳԵՐՄԱՆԻԱ. —Վիլհէլմ Կայսը, ինչպէս յայտնի է, բազմաթիւ և բազմատեսակ տաղանդներով օժտուած է: Ո՛չ միայն երաժիշտ այլ և նկարիչ է: Անցեալ տարի նկար մը գծեց որ մեծապէս ուշագրութիւն գրաւեց՝ պատկերելով «Դեղին վտանգն», այն է Չինացի-մոնկոլեան ցեղն որ Արեւմտեան քաղաքակրթութեան կը սպառնայ: Այս անգամ ալ աւարտեց նկար մը որով կը պատկերէ Դեղարուեստներն ու ճարտարութիւնն որք Բանակին պաշտպանութիւնը կը վայելեն:

—Հօէնլոէ իշխան տեսակցութիւն մ'ունեցաւ Վիլհէլմ Կայսեր հետ, և հիմա գերման լրագիրք կը հերքեն իշխան-վարչապետին հրաժարման լուրը:

ԻՏԱԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ. —Խառլայի զինուորներ ձերբակալեցին Ժոզէֆ Քրանք անուն ֆրանսացի քահանան, որ իբրեւ լրտես կ'ամբաստանուի: Բռնեցին նաեւ Մարգինի ձիւղէբբէ անուն խառլային, որ երկու զինուոր համողած էր դասալիք ըլլալու, խոստանալով գնել անոնց հրացանը:

ՀԱՊԷՇՍՏԱՆ. — Խաղեան զրահաւորի մը կողմէ կարմիր ծովու մէջ բռնուած հոլանտական շոգենաւը բռնաւորուած էր 30,000 հատ կրա անուն ֆրանսական հրացան և համապատասխան թուով փամփուշտ: Մենելիք թագաւորին այս ղէնքերն յանձնելու պաշտօն ունեցող անձն եւս որ նոյն շոգենաւին մէջ էր՝ կ'ըսուի թէ ֆրանսացի մ'է:

Թարգմանութիւնք Կ. Ս. Իւթիւնեանի

ԶԵՂԶԵԱԼ ԳԻՆԵՐ

	Հաւսնր	Ղրուց
Թափառական Հրեայ (Էօժէն Սիւ)	4	50
Ընտանեզուրկ (Էքթօր Մալոյ)	2	12
Կարմիր Մարդոց Երդումը (Բօնսօն տիւ Թէրայլ)	2	10
Կրանթ նաւապետին որդիքը (Ժիւլ Վէրն)	3	15
Հինգ շաբաթ օդապարիկով »	2	12
Ամուսնութիւնք Փարիզի (Էտմոն Սպու)	1	5
Զիկազակ (Ֆօրթիւնէ տը Պուակօպէ)	1	5
Տիկիլին Վիլիքերոն որդի (Լէոն տը Թէնսոյ)	1	5
Սկզբունք քաղաքական տնտեսութեան (Ժօ- գէֆ Կառնիէ)	1	3
Պատժ. Օրինագիրք Օսմ. Պետութեան	1	2
Արկածք Միւնխիմազէն Պարոնի	1	2

Կեդրոնատեղին է ՊԱՂՏԱՏՆԵԱՆ ՊՐԱՏՈՒՆ ՍՈԼԷ
Թան Համամ Թիւ 14:

ՏՈՔԹ. ՇԻՐԻՆԵԱՆ

ԲԺԻՇԿ, ՎԻՐԱԲՈՅԺ ԵՒ ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայեալ Ֆիլատէլֆիոյ եւ Նիւ Եորքի համալսարաններէն, երեք տարի հիւանդանոցաց մէջ ծառայած, յետ տասն եւ հինգ ամեայ փորձառութեան, իւր քնակութիւնը հաստատած է Բերա, Սագըզ Ադամ փողոց Թիւ 47 տունը, ուր կ'ընդունի հիւանդ ամէն օր ժամը 7-11. երեքշաբթի եւ ուրբաթ օրերը ձրի կը դարմանէ իրեն դիմողները, իսկ շաբաթ օրերը ժամը 7 էն մինչեւ 9ը կը գտնուի Պօլիս Բիւլ-չիւքեան Եղբարց դեղարանը: Կը դարմանէ ամեն հիւանդութիւնք, մասնաւորապէս սրտի եւ կուրծքի եւ կը կատարէ ռմեն կարգի վիրահատական գործողութիւնք:

Ա Ղ Օ Թ Ա Գ Ի Ր Ք

Ա. Մ. Ա. Մ.

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք

Հ Ա Յ . Ս . Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ

ԴԱՍԱԽՈՐԵԱԼ ԵՒ ԲԱՑԱՏՐԵԱԼ ԱՇԽԱՐՀԱԲԱՌՈՎ

Ի Տ . ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒՍԳ . ԲՍՀԱՆՍՅԱՆ ՄԵՐԵԱՆ

Գ . ՏՊԱԳՐՈՒԹ Ի Ի Ն 1895

Որոյ մէջ այս անգամ կը տեսնուի Հոգեւոյ Տ . Ներսէս Պատրիարքի թղթոյն հետ՝ արդի Ամեն . Տ . Մատթէոս Ս . Պատրիարքի մի յորդորական թուղթն՝ ուղղեալ առ ժողովուրդն:

Սոյն հոգեշահ Աղօթագիրք-ժամագիրքն արդէն երկու անգամու տրպագրութեամբ հաւատացելոց գնահատման արժանացած , այս երբորդ անգամ ի լոյս կ'ընծայուի յոյժ գեղեցիկ տպագրութեամբ Պաղտատլեան տպարանին , ընտիր թղթի վրայ , նորագոյն զարդարուն շրջանակներով , եւ նրբարանգակ չքնաղ պատկերներով , եւ 860 երեսներով , եւ Յ . Մատթէոսեան զործատան սիրուն եւ հաստատուն կազմերով:

Գին լաճակազմ 15 Ղըշ .

Ոսկեզօծ . 22 ,

Փառակազմ կաշի 30 ,

Կը գտնուի ամեն հայ զրավաճառաց քով , բայց կեդրոնատեղին է ի Կ . Պօլիս , Պ . Պալենց զրատունն ի Ձարմագնջլար Թիւ 20 , եւ ի Բերա Ս . երբորդուծիւն եկեղեցւոյ բանկալը:

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ՏՈՒԹ . Յ . ԱՐՍՊԵՍՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ հինգշաբթի օրերն կատարած ձրի խորհրդակցութիւնները , յետայսորիկ , տեղի պիտի ունենան ժամը 5 էն մինչեւ 11 ըստ Թրքաց:

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Կ . Ս . Ի Ի Թ Ի Ի Ճ Ե Ա Ն